

Auto ID No.:
Source :
Issued by : ACL No. 13-80
Reg Cite : 44-350.1, 44-352.4

Use Form No. : NA 290
Original Date : 05-01-13 New
Revision Date : 09-23-13

MESSAGE:

Դուք չափազանց շատ կանխիկ դրամական օգնություն եք ստացել:
Դուք գերավճարվել եք ընդհանուր \$ _____ (թվական) -ից
մինչև (թվական): Մենք գերավճարման հաշվարկը ցույց ենք
տալիս կից ներկայացված բյուջեի աշխատանքային թերթում:

Գերավճարման պատճառն էր՝
[] Վարչական շրջանի թերացումը
[] Ձեր սխալը
[] Դուք եք առաջացրել գերավճարում, որովհետև
կա մ չէք զեկուցել ինչ-որ բան, կա մ միտումնավոր սխալ եք
զեկուցել ինչ-որ բան՝ փորձելով ավելի շատ օգնություն
ստանալ: Ձեզ կարող են քրեական մեղադրանքներ
ներկայացվել, կամ Դուք կարող եք ծրագրի միտումնավոր
խախտման համար առաջարկվող տուգանքի ծանուցագիր
ստանալ այս արարքի պատճառով:

Ահա թե ինչպես է տեղի ունեցել գերավճարումը.

Վարչական շրջանը դեռ չի կարող սկսել այս գերավճարման
գանձումը, որովհետև

- [] հիմա միջանկյալ ժամանակաշրջան է.
- [] մենք արդեն նվազեցնում ենք Ձեր դրամական հատկացումը
գերավճարման տարբերությունը հետ գանձելու նպատակով:

Դուք առանձին ծանուցագիր կստանաք, նախքան կսկսենք հետ
գանձել այս գերավճարման գումարները:

Հաջորդ էջը (էջերը) ցույց է տալիս, թե որքան կանխիկ
դրամական օգնություն պետք է ունեցած լինեիք յուրաքանչյուր
ամիս, որում գերավճարվել եք, և թե որքան է Ձեր ընդհանուր
պարտքի գումարը:

Ձեզնից չի պահանջվում այս գերավճարումը փոխհատուցելու
համար օգտագործել Ձեր ստացած սոցիալական
ապահովագրության նպաստները կամ SSI նպաստները:

**ԶԳՈՒՇԱՑՈՒՄ. Եթե կարծում եք, որ այս գերավճարումը սխալ է, կամ եթե կարծում եք, որ դա չի եղել Ձեր
թերացումը կամ սխալը (ոչ միտումնավոր), պահանջեք լսումներ:** Եթե շարունակում եք օգնություն ստանալ,
Վարչական շրջանը կարող է գերավճարված գումարը գանձել՝ նվազեցնելով Ձեր ամսական դրամական հատկացումը:
Եթե օգնության ծրագրից դուրս եք գալիս նախքան գերավճարված գումարի հետգանձումը, Վարչական շրջանը կարող
է պարտքը վերցնել Ձեր պետական եկամտահարկի վերադարձումից կամ գումարի գանձման համար դիմել այլ
իրավական գործողության:

INSTRUCTIONS: Use to notify of an overpayment when grant adjustment may not yet begin. Specify the amount owed, the dates, and the reason for the overpayment. Attach the appropriate Continuation Page (NA 274 B, C, D, E or F) to show the overpayment computation.